


---

ԱՐԱՄ ՄԱԹՈՒՆՅ, Երգեր, «Ամրոց գրուպ» հրատ., Ե., 2013, 112 էջ, նոտաներ:



2013 թվականին լրացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Արամ Մաթունյի (1913-1990) ծննդյան 100-ամյա հոբելյանը: Այդ առթիվ պետական պատվերով լույս տեսավ նրա երգերի և ողմանսների ժողովածուն, որը կազմել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արամ Մաթյանը: Առաջաբանի հեղինակն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը:

Բազմաժանր է կոմպոզիտորի երաժշտական ժառանգությունը: Նրա սիմֆոնիկ ստեղծագործությունը ներառում է «Ջանգեզուր» պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար (1942), «Հայկական ֆանտազիան» սիմֆոնիկ նվագախմբի համար (1960), «Ռապսոդիան» սիմֆոնիկ նվագախմբի համար (1960), Երկու վալս սիմֆոնիկ նվագախմբի համար (1967), «Լուսնի շողերը» խորեոգրաֆիկ պատկերները սիմֆոնիկ նվագախմբի համար (1988) և «Հավերժ հիշողություն» դրամատիկ պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար՝ նվիրված Հայաստանի երկրաշարժի զոհերի հիշատակին (1988): Առավել նշանակալի վոկալ-սիմֆոնիկ գործերից են «Վերածնված նաիրյան երկրի երգերը» վոկալ-սիմֆոնիկ շարքը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1979) և «Ժողովրդի սիրանքն ամահ է» կանտատը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1980): Մերը ժողովրդական երաժշտության և ժողովրդական գործիքների հանդեպ ծնունդ տվեց մի շարք գործերի՝ «Բարեկամության պար» ժողգործիքների անսամբլի համար (1963), «Մարտական պար» ժողգործիքների անսամբլի համար (1963), «Տոնական Հայաստան» սյուիտը խառը երգչախմբի և ժողգործիքների անսամբլի համար (1970), «Կոնցերտինոն» քանոնի և ժողգործիքների նվագախմբի համար (1987), «Նոկտյուրնը» թառի համար (1963) և այլն: Ա. Մաթունյի կամերային ստեղծագործությունն են ներկայացնում

«Երեք պրեյյուդ դաշնամուրի համար» (1937), «Ինտրոդուկցիա և պար» ջութակի համար և «Զանգեզուրյան պար» դաշնամուրային տրիոն, Թեման վարիացիաներով դաշնամուրի համար (1938), Սոնատ-պոետը դաշնամուրի համար (1946) և «Էլեգիա» և «Վալս-կապրիս» երկու ջութակի և դաշնամուրի համար (1968): Ծանրակշիռ է Ա. Սաթունցի դերը ռադիոֆեմականացումների և թատերական ներկայացումների երաժշտական ձևավորման բնագավառում: Նա կատարել է բազմաթիվ դրամատիկ ներկայացումների երաժշտական ձևավորումներ Երևանում, Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Ստեփանակերտում, Լենինականում և այլուր:

Եվ այդուամենայնիվ՝ ինչպես նշում է Ա. Ասատրյանը. «Հայ երաժշտարվեստի երախտավոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, տաղանդավոր կոմպոզիտոր և անդուլ հասարակական գործիչ Արամ Մովսեսի Սաթունցի բազմաժանր երաժշտական ժառանգության վառ էջերից է երգարվեստը: Նրա երգերն ու ռոմանսները կոմպոզիտորի կյանքի օրոք մեծ ժողովրդականություն են վայելել, քանի-քանի սերունդներ են կյանք մտել և արարել այդ երաժշտության ուղեկցությամբ՝ շատ անգամ չիմանալով իսկ դրանց հեղինակին: Իսկ Հայկական հեռուստատեսությունը քառորդ դար իր երեկոյան հաղորդումները եզրափակում էր «Միրո վալսով»: Եվ իսկապես՝ մոր շուրթերից լսված երգը կարծես դրոշմվել էր երաժշտի հոգում և ուղեկցեց նրան ողջ կյանքի ընթացքում»:

Գրախոսվող ժողովածուն ներառում է «Հայրենիքիս առավոտը» (խոսք՝ Մ. Հարությունյանի), «Իմ հայրենի Զանգեզուր» (խոսք՝ Վ. Արամունու), «Իմ սիրո Սևան» (խոսք՝ Ն. Մովսիսյանի և Ա. Սաթունցի), «Իմ Ղարաբաղ» (խոսք՝ Ա. Գրաշու), «Բարեկամության վալս» (խոսք՝ Ա. Սաթունցի), «Կատակերգ յոթ քույրերի մասին» (խոսք՝ Ա. Սաթունցի), «Ուրախ տրամադրություն» (խոսք՝ Մ. Հարությունյանի), «Միրո գարուն» (խոսք՝ Ա. Սաթունցի), «Հարսանեկան» (խոսք՝ Ա. Սաթունցի), «Լեռան աղջիկ» (խոսք՝ Սարմենի), «Պարտեզի աղջիկ» (խոսք՝ Ա. Գրաշու), «Խնջույքի երգ» (խոսք՝ Ա. Գրաշու), «Հերոս տղաներ» (խոսք՝ Գ. Բանդուրյանի), «Բուժքույրը» (խոսք՝ Ա. Դարբնու), «Շնորհավոր նոր տարի» (խոսք՝ Գ. Բանդուրյանի) երգերը, ինչպես նաև «Միրո բալլադ» (խոսք՝ Վ. Կարենցի), «Իրիկնային ռոմանս» (խոսք՝ Վ. Արամունու) և Մ.Լեբունտովի խոսքերով "Как солнце зимнее прекрасное" ու "К себе" ռոմանսները: Ըստ էության, ժողովածուն ամփոփում է գեղարվեստական միտումների բազմազանությամբ օժտված սաթունցյան երգերի և ռոմանսների հետաքրքիր մուշները, որոնցից շատերը մեծ ժողովրդականություն են վայելել: Այն բաղկացած է հայրենասիրական,

հայրենի բնության, տոնական, ծիսական, կենցաղային բնույթի երգերից, կատակերգից ու ռոմանսներից: Ինտոնացիոն նյութը, որը հիմնված է հայ երաժշտությանը բնորոշ ինտոնացիոն, լադահարմոնիկ և մետրադիտական առանձնահատկությունների վրա, առանձնանում է մեղեդիական կազմակերպման ինքնատիպությամբ: Երգերի և ռոմանսների կատարումը պահանջում է խելամիտ մոտեցում ձայնարտաբերման հարցում, քանի որ յուրաքանչյուր փոքր հատված ունի իր տեմբրային ակուստիկ և կառուցվածքային առանձնահատկությունները՝ ֆակտուրայում ռիթմիկ տարաբնույթ կառուցվածքը, նրանց դիրքը տարբեր դիապազոններում: Ֆակտուրայի գունապնակը այնքան լեցուն է և փոխլրացնող մեղեդուն, որ ստեղծվում է գեղագիտական ճաշակ ձևավորող անկրկնելի մթնոլորտ: Մաթունցի երգերում և ռոմանսներում նկատվում է խոսքերի և երաժշտության յուրօրինակ սինթեզ, որը ձեռք է բերել գեղարվեստական արդյունք:

Ընտրանին ունի ներքին կուռ տրամաբանական կառուցվածք և զարգացող պոեմ: Ա. Մաթյանն ընտրել է մենակատարների համար գրված երգեր (խոսքը վերաբերում է երգչախմբի առկայությանը, քանի որ ցանկում տեղ են գտել նաև զուգերգեր). այդ պատճառով ցավալիորեն ալբոմից դուրս է մնացել կոմպոզիտորի լավագույն երգերից մեկը՝ «Միրո վալսը»: Մեր գրույցի ընթացքում Ա. Մաթյանը նաև բացեց փոքրիկ գաղտնիք՝ կոմպոզիտորի ստեղծագործական ընթացքի մասին. Ա. Մաթունցը նախ գրում էր երաժշտությունը, ապա միայն խոսքերը (բացառություն են Յու. Լերմոնտովի խոսքերով գրված ռոմանսները՝ հորինված ռուս բանաստեղծի մահվան 100-ամյա տարելիցի կապակցությամբ), ինչին շատ խստապահանջ էր մոտենում արվեստագետը: Շատ անգամ կոմպոզիտորն ինքն էր դառնում խոսքերի հեղինակ կամ համահեղինակ, քանի որ հեղինակի առաջարկած բառը չէր համապատասխանում երաժշտության իմաստային բովանդակությանը:

Մաթունցի ձգտումը լակոնիզմին և ձևի կուռ կառուցվածքին բնորոշ է նրա յուրաքանչյուր ստեղծագործությանը: Կենսուրախ և հայրենասեր հայորդու ստեղծագործություններում արտահայտվել է լավատեսական և հայրենասիրական ոգին: Հուզականությամբ, քնարականությամբ, մեղեդայնությամբ և հայկական հարուստ ու նրբաճաշակ գունեղությամբ են պարուրված նրա երգերն ու ռոմանսները: Նրա ստեղծագործություններում ներդաշնակ համատեղվում են ժողովրդական երաժշտությունը և յուրօրինակ անհատական կոմպոզիտորական գրելառճը: Պատահական չէ նաև, որ դաշնամուրի համար գրված Սոնատ-պոեմում օգտագործել է «Մաճկալ» երգի ելնեջները:

Թեև կոմպոզիտորի կյանքի օրոք լույս է տեսել նրա երգերի հեղինակային հինգ ժողովածու, այդուհանդերձ այս ժողովածուն աննախադեպ է, քանի որ ուղեցույց է դառնում թե՛ երաժիշտների, թե՛ սիրողների, թե՛ կատարողների համար դեպի ավելի խոր ուսումնասիրություն, դեպի սաթունցյան երգարվեստի կախարդական աշխարհ: Ընթերցումից տպավորությունն ինքնին վառ է, և բացի դա՝ այն ունկնդրի հիշողությունը կամրջում է դեպի հարուստ և գեղեցիկ հոգևոր արժեքների մի աշխարհ, որտեղ ապրում և արարում էր կոմպոզիտորը:

Իր զրույցներից մեկում կոմպոզիտոր Միքայել Թարիվերդինն ասել է. «Պետք է որոնել այն երաժշտական լեզուն, որը ելնում է այսօրվա խոսակցական ինտոնացիաներից, որն ինտոնացիայի առումով այնքան մոտ լինի դահլիճին, որքան լավագույն բանաստեղծությունը»: Ա. Սաթունցն այն կոմպոզիտորներից էր, որը գտել էր այդ լեզուն, ավելին, նրա ինտոնացիաները դարձրել էին ժողովրդական: Նաև այն երջանիկներից էր, որին սիրել և գնահատել են ժամանակակիցները, իսկ ստեղծագործական ժառանգությունն իր ուրույն տեղն է զբաղեցրել հայ երաժշտության գանձարանում:

Հուսանք, որ սաթունցյան երգերի հանդեպ արդի երիտասարդությունը կցուցաբերի ավելի մեծ հետաքրքրություն, սովորելու տենչ և դրանք սրբորեն պահպանելու անմար հուրը կփոխանցի հաջորդ սերունդներին: Համոզված ենք, որ կոմպոզիտորի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները և սույն ժողովածուի լույսընծայումն առիթ կհանդիսանան երաժշտասեր հասարակությանը, հատկապես, երիտասարդ երաժիշտներին մեկ անգամ ևս ներկայացնելու կոմպոզիտորի ստեղծագործական ձեռքբերումներն ու հայ երաժշտության գանձարանում ներդրված ավանդը՝ վառ պահելով արվեստի իսկական նվիրյալի լուսավոր հիշատակը...

ԱՐՏԵՄՅԱՆ Լ. Ռ.